

# ԿՐՈՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ 2018 ՀԱՅԱՍՏԱՆ

21 հունիսի, 2019թ.

## ԱՄՓՈՓԻՉ ԱԿՆԱՐԿ

Սահմանադրությամբ ամրագրված է, որ յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այն ճանաչում է Հայաստանյայց առաքելական եկեղեցին (ՀԱԵ) որպես ազգային եկեղեցի և ազգային ինքնության պահպանող, բայց նաև սահմանում է, որ «կրոնական կազմակերպություններն» անջատ են պետությունից: Ըստ լրատվամիջոցների մարտին ոստիկանությունը փորձել է ճնշման ներքո դեպի ՀԱԵ վերադարձնել մի երիտասարդի, ով հայտարարել էր իր աթեիստ լինելու մասին: Համազգային բողոքի արդյունքում մայիսին վարչապետ ընտրված Նիկոլ Փաշինյանը մի շարք առիթներով ասել է, որ պետությունն ու եկեղեցին անջատ են իրարից և կառավարությունը չի միջամտում եկեղեցու գործերին: Ըստ տեղի դիտորդների՝ նոր կառավարությունը կասեցրել է փոքրամասնական կրոնական խմբերի շրջանում մեծ մտահոգության տեղիք տված կրոնական ազատության մասին նոր օրինագծի ընդունման գործընթացը: Ըստ բահայական համայնքի ներկայացուցիչների՝ 2017թ. դեկտեմբերին իշխանությունների կողմից կալանավորվել է իրենց համայնքի ականավոր դեմքերից մեկը, ով մինչև հուլիս կալանքի տակ էր գտնվում, ապա դատարանը նրան գրավի դիմաց ազատ արձակեց: Որոշ քաղաքացիական հասարակության և կրոնական փոքրամասնական խմբերը շարունակում էին մտահոգություններ հայտնել, որ հանրակրթական դպրոցներում դասավանդվող Հայոց եկեղեցու պատմություն առարկան բովանդակային առումով խտրականություն է կրոնական փոքրամասնությունների նկատմամբ և չկա մեխանիզմ, որով այդ առարկան լինի կամրնտիր: Ըստ Կրոնի և իրավունքի կենտրոնի Ելփին համայնքում հանրակրթական դպրոցի բողոքական ավետարանական եկեղեցու հետևորդ ուսուցիչը դարձել է կրոնական խտրականության թիրախ:

Ըստ լրատվական վերլուծաբանների ապրիլյան «Թավշյա հեղափոխությունից» հետո հեռացված իշխանությունների հետ կապ ունեցող կամ համակիր անձիք օգտագործել են կրոնական խնդիրները նոր կառավարությանը քննադատելու նպատակով: Տարբեր մասնավոր լրատվամիջոցներ և սոցիալական էջերի օգտատերեր նշում էին, որ հեղափոխությունն առաջնորդել են փոքրամասնական կրոնական խմբերը, որոնց նրանք կոչում են «աղանդներ», և որ այդ «աղանդները» շարունակում են ներգործել նոր կառավարության վրա: Ըստ տեղի դիտորդների՝ նման հրապարակումները հանգեցրել են կրոնական հարցերի շուրջ օբյեկտիվ հաղորդումների կտրուկ անկման: Կրոնական փոքրամասնությունները նշում էին, որ իրենց բնութագրմամբ «ազգայնական մթնոլորտի»

հետևանքով, հատկապես՝ մայրաքաղաքից դուրս, իրենց հետևորդները հասարակության կողմից ենթարկվել են խտրականության:

ԱՄՆ դեսպանը և դեսպանության այլ պաշտոնյաները շարունակել են բարձրացնել կրոնական հանդուրժողականությանն ու միջդավանական երկխոսությանն ուղղված հարցեր պետական պաշտոնյաների հետ իրենց հանդիպումներում: Դեսպանության պաշտոնյաները հանդիպել են ՀԱԵ-ի առաջնորդների հետ՝ ներգրավելու ՀԱԵ-ին կրոնական փոքրամասնությունների կողմից առանց սահմանափակումների իրենց հավատքներին դավանելու իրավունքների պաշտպանության հարցերում: Հուլիսին դեսպանն ընդունելություն կազմակերպեց ՀԱԵ-ի, կրոնական և էթնիկ փոքրամասնությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար՝ նպաստելու միջկրոնական երկխոսությանը, փոխադարձ հարգանքին և համագործակցությանը և ներկայացնելու Պետքարտուղարության կրոնական ազատությունների մասին նախորդ զեկույցը: Դեսպանությունն օգտագործում է ֆեյսբուքյան և թվիթերյան հարթակները՝ կրոնական հանդուրժողականությանն աջակցող ուղերձներ տարածելու համար: Դեսպանը և դեսպանության այլ պաշտոնյաները երկրում կրոնական ազատության հետ կապված իրավիճակը քննարկելու նպատակով պարբերաբար հանդիպել են փոքրամասնական կրոնական խմբերի հետ, այդ թվում՝ ավետարանական քրիստոնյաներ և այլ բողոքականներ, Եհովայի վկաներ, Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցու հետևորդներ (Հիսուս Քրիստոսի եկեղեցի), եզդիներ, հրեական համայնք, առաքելական ասորիներ, հիսունականներ և բահայիներ:

## **ՄԱՍ I. ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

ԱՄՆ կառավարության գնահատմամբ ընդհանուր բնակչությունը կազմում է շուրջ 3.0 միլիոն (2018թ. հուլիսի դրությամբ): Ըստ 2011թ. մարդահամարի բնակչության մոտ 92 տոկոսն իրեն բնորոշում է որպես ՀԱԵ-ի հետևորդ: Մյուս կրոնական խմբերը ներառում են. Հռոմեական կաթոլիկներ, Հայկական Մխիթարյան միաբանության անդամ կաթոլիկներ, ուղղափառ քրիստոնյաներ, ավետարանական քրիստոնյաներ, հիսունականներ, յոթերորդ օրվա ադվենտիստներ, բապտիստներ, խարիզմատիկ քրիստոնյաներ, Եհովայի վկաներ, Հիսուս Քրիստոսի եկեղեցու հետևորդներ, Արևելքի ասորական կաթողիկոսության սուրբ առաքելական եկեղեցու հետևորդներ, հեթանոսներ, քրիստոնյա-մոլոկաններ, եզդիներ, հրեաներ, բահայիներ, սունի և շիա մահմեդականներ: Միջազգային հանրապետական ինստիտուտի հարցման տվյալներով, որը հրապարակվել է հոկտեմբերին, բնակչության 94 տոկոսն իրեն համարում է հայ առաքելական, 2 տոկոսը՝ կաթոլիկ, 3 տոկոսը՝ այլ կրոնի և 1 տոկոսը՝ կրոն չունեցող: Հրեական համայնքի տվյալներով հրեաների թիվը երկրում մոտ 800 հոգի է:

Եզդիները հիմնականում կենտրոնացված են Արագած լեռան շրջանում գտնվող գյուղական բնակավայրերում՝ մայրաքաղաք Երևանից դեպի հյուսիս-արևմուտք: Հայ կաթոլիկները հիմնականում բնակվում են հյուսիսում: Հրեաների մեծ մասը, Հիսուս Քրիստոսի եկեղեցու հետևորդներն ու ուղղափառ քրիստոնյաները, ինչպես նաև մահմեդականների փոքրիկ համայնքը, որը հիմնականում կազմված է շիա մահմեդականներից և ներառում է իրանցիներ և ժամանակավոր կացություն ունեցող անձինք Միջին Արևելքից, բնակվում են Երևանում:

## **ՄԱՍ II. ԿՐՈՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ ՀԱՐԳԱՆՔ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ**

### ***Իրավական դաշտ***

Սահմանադրությամբ ամրագրվում է, որ յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով պաշտամունքի ծիսակատարություններով՝ օրինակ՝ քարոզ կամ եկեղեցական արարողություններ, արտահայտելու ազատությունը: Սահմանադրությունը թույլ է տալիս սահմանափակել այս իրավունքը պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Սահմանադրությունը սահմանում է, որ «կրոնական կազմակերպություններն» անջատ են պետությունից: Այն ճանաչում է «Հայաստանյայց առաքելական եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում»: Սահմանադրությամբ արգելվում է հիմնական իրավունքների և ազատությունների օգտագործումը կրոնական ատելություն բորբոքելու նպատակով: Այն թույլ է տալիս, որ այն անձինք, ում կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է զինվորական ծառայությունը, անցնեն այլընտրանքային քաղաքացիական ծառայություն:

Օրենքն արգելում է, սակայն չի սահմանում «հոգեորսությունը», եզրույթ, որն օգտագործվում է բնութագրելու թե՛ դավանափոխությունը, և թե՛ հարկադիր կրոնափոխությունը:

Օրենքի համաձայն գրանցված կրոնական խմբերը կարող են ապահովել իրենց հավատացյալների հոգևոր-կրոնական կարիքների ու պահանջմունքների բավարարումը. կատարել կրոնական ժամերգություններ, ծեսեր ու արարողություններ, ստեղծել համապատասխան կրոնական ուսուցման խմբեր, զբաղվել աստվածաբանական, կրոնական և պատմամշակութային ուսումնասիրություններով, պատրաստել հոգևորական ծառայության կամ գիտական

ու մանկավարժական կադրեր, ձեռք բերել և օգտագործել կրոնական նշանակության առարկաներ ու նյութեր, օգտվել լրատվության միջոցներից, կապեր հաստատել այլ երկրների եկեղեցական կազմակերպությունների հետ և զբաղվել բարեգործությամբ: Օրենքը կրոնական խմբերի գրանցման պահանջ չի սահմանում, սակայն գրանցումն անհրաժեշտ է խմբի անունից գործարքներ կատարելու համար (օրինակ՝ սեփականություն ունենալ, վարձակալել գույք կամ բանկային հաշիվներ բացել): Օրենքը չի սահմանում չգրանցված խմբերի իրավունքները:

Որպես իրավաբանական անձ գրանցվելու համար կրոնական համայնքը պետք է Պետռեգիստր ներկայացնի փորձագիտական եզրակացություն Ազգային փոքրամասնությունների ու կրոնի հարցերով բաժնից առ այն, որ համայնքը համապատասխանում է օրենքի պահանջներին և հիմնված է «պատմականորեն կանոնացված որևէ սուրբ գրքի» վրա: Այն պետք է նաև «զերծ լինի նյութապաշտությունից և ուղղված լինի հոգևոր ոլորտները», ունենա առնվազն 200 չափահաս անդամ և իր ուսմունքով մտնի «համաշխարհային ժամանակակից կրոնական-եկեղեցական համայնքների համակարգի» մեջ: Օրենքը չի սահմանում, թե ինչ է նկատի առնվում «զերծ է նյութապաշտությունից» ասելիս և չի հստակեցնում, թե կրոնական որ համայնքներն են «համաշխարհային ժամանակակից կրոնական-եկեղեցական համայնքների համակարգի» մաս: Օրենքը սահմանում է, որ այս գրանցման պահանջների ցանկը, որի մասով համապատասխանությունը հաստատվում է Ազգային փոքրամասնությունների ու կրոնի հարցերով բաժնի կողմից, չի վերաբերվում այն կրոնական կազմակերպություններին, որոնք հիմնված են ազգային փոքրամասնություն ճանաչված որևէ խմբի կրոնի վրա: Կրոնական համայնքը կարող է Պետռեգիստրի որոշումը դատական կարգով բողոքարկվել:

Քրեական օրենսգրքով արգելվում է «կրոնի ազատության իրավունքի իրականացմանը խոչընդոտելը», որի համար սահմանվում է 200.000 ՀՀ դրամ (410 ԱՄՆ դոլար) տուգանքից մինչև կալանք՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:

Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) գրասենյակը լիազորված է զբաղվել պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման պաշտոնյաների կողմից թույլ տրված մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների, այդ թվում կրոնական ազատության խախտումներով:

Օրենքն արգելում է ոստիկանության, Ազգային անվտանգության ծառայության, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության, քրեակատարողական համակարգի կամ փրկարարական ծառայության աշխատակիցներին լինել կրոնական կազմակերպության անդամ, սակայն օրենքը չի սահմանում, թե ինչ է նշանակում «անդամակցությունը» կրոնական կազմակերպությանը: Օրենքն արգելում է ոստիկանության, զինված ուժերի և Ազգային անվտանգության ծառայողներին, ինչպես նաև դատախազության աշխատակիցներին, մաքսային ծառայողներին, դիվանագետներին և այլ պետական, համայնքային ու քաղաքացիական ծառայողներին

օգտագործել իրենց ծառայողական դիրքը «կրոնական միավորումների» շահերի համար կամ նրանց օգտին քարոզչության համար: Օրենքով նաև արգելվում է ոստիկանների, դատախազների, այլ պետական ու քաղաքացիական ծառայողների կողմից ծառայողական պարտականությունները կատարելիս այլ կրոնական գործունեություն իրականացնելը: Թեպետ օրենքը սահմանում է «կրոնական կազմակերպությունը» որպես հավատի համատեղ դավանության, ինչպես նաև կրոնական այլ պահանջմունքների բավարարման նպատակով ստեղծված քաղաքացիների միավորում, սակայն «կրոնական միավորման» սահմանում չի տրվում: Զինծառայողն իրավունք չունի ստեղծել կրոնական միավորումներ: Իսկ եթե զինծառայողը հանդիսանում է կրոնական միավորման անդամ, ապա իրավունք չունի զինվորական ծառայության ընթացքում և ծառայակիցների շրջանում իրականացնել քարոզչական գործունեություն:

Քրեակատարողական օրենսգիրքը քրեակատարողական հաստատություններին թույլ է տալիս կրոնական արարողությունների համար հրավիրել եկեղեցականների և օգտագործել կրոնական առարկաներ ու գրականություն: Բանտարկյալները կարող են խնդրել հոգևոր աջակցություն՝ իրենց նախընտրած կրոնական խմբից:

Օրենքը ՀԱԵ-ին հիվանդանոցներում, մանկատներում, գիշերօթիկ դպրոցներում, գորամասերում, և ազատագրվման վայրերում ազատ մուտքի ու մշտական ներկայացուցիչ ունենալու իրավունք է վերապահում, մինչդեռ մյուս կրոնական խմբերը կարող են ներկայացուցիչ ապահովել հիշյալ կառույցներում միայն տվյալ հաստատության ղեկավարից թույլտվություն ստանալու դեպքում: Օրենքը նաև նախատեսում է, որ պետությունը չի միջամտի ՀԱԵ-ի՝ ողջ երկրի տարածքում ազատորեն քարոզչություն իրականացնելու և իր հավատը տարածելու բացառիկ իրավունքի իրացմանը:

Օրենքով սահմանվում է, որ հանրակրթական դպրոցներում ուսուցումն աշխարհիկ է, և նշվում է, որ «կրոնական գործունեությունը և քարոզչությունն ուսումնական հաստատություններում արգելվում են, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի»: Թեպետ հանրային և մասնավոր դպրոցներում Հայոց եկեղեցու պատմություն առարկայի դասավանդումը կատարվում է դպրոցի ընտրությամբ, սակայն եթե դպրոցն ընտրում է այդ առարկան, ապա տվյալ դպրոցի բոլոր աշակերտների համար այն դառնում է պարտադիր առարկա 5-11-րդ դասարաններում. չկա աշակերտին կամ նրա ծնողին առարկայից հրաժարվելու հնարավորություն տվող դրույթ:

ՀԱԵ-ն իրավունք ունի մասնակցել Հայոց եկեղեցու պատմություն առարկայի ուսումնական ծրագրերի և դասագրքերի մշակմանը, այն դասավանդող ուսուցիչների որակավորման պահանջների սահմանմանը: Եկեղեցին կարող է առարկան դասավանդող ուսուցիչների թեկնածություններ առաջադրել, սակայն նրանք հանդիսանում են պետական աշխատողներ: Օրենքը ՀԱԵ-ին իրավունք է շնորհում

կազմակերպել կրոնական ուսուցման կամավոր արտաձրագրային դասընթացներ պետական կրթական հաստատություններում: Մյուս կրոնական խմբերը կարող են իրենց անդամների համար կրոնական ուսուցում իրականացնել իրենց պատկանող հաստատություններում, սակայն ոչ հանրակրթական ուսումնական հաստատությունների տարածքում:

Աշխատանքային օրենսդրությամբ գործատուներին արգելվում է աշխատակիցների կրոնական հայացքների մասին տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը:

Այն անձանց համար, որոնց կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է զինվորական ծառայություն անցնելը, օրենքը սահմանում է պարտադիր երկամյա զինվորական ծառայության երկու այլընտրանք՝ այլընտրանքային (զենքի հետ կապ չունեցող) զինվորական ծառայություն 30 ամիս տևողությամբ կամ այլընտրանքային աշխատանքային ծառայություն 36 ամիս տևողությամբ: Այլընտրանքային ծառայությունից խուսափելը համարվում է քրեորեն պատժելի արարք, որի համար նախատեսված պատժամիջոցները պայմանավորված գործի հանգամանքներից կարող են լինել 2 ամսվա կալանքից մինչև 8 տարվա ազատազրկում:

Քրեական օրենսգրքով արգելվում է կրոնական ատելության հրահրումը բռնության, հրապարակային հայտարարությունների կամ լրատվության միջոցով և դրա համար սահմանվում է տույժ 200.000-ից 500.000 ՀՀ դրամի սահմաններում (410-1.030 ԱՄՆ դոլար) կամ ազատազրկում 2-ից 6 տարի ժամկետով:

Երկիրը Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի մասնակից պետություն է:

### ***Կատավարության գործունեությունը***

Մարտի 30-ին մարդու իրավունքների հարցերը լուսաբանող *Epress.am* անկախ առցանց լրատվամիջոցում տեղ գտավ հաղորդում այն մասին, որ Հրագրան քաղաքի ոստիկանները փորձել են ճնշում գործադրել, որպեսզի մի երիտասարդ, ով իրեն համարում էր արթեիստ, «վերադառնար» ՀԱԵ: Հաղորդման համաձայն անհայտ ոստիկաններ երիտասարդին շինծու պատրվակով հասցրել են Երեխաների աջակցության կենտրոն՝ հոգեբանի տեսնելու համար և գիշերը նրան պահել են այնտեղ:

Հունիսից սկսած «Նոր Հայաստան, նոր Հայրապետ» նախաձեռնող խումբը, որի կազմում էին աշխարհիկ ակտիվիստներ և ՀԱԵ երկու նախկին հոգևորականներ, կազմակերպում էր բողոքի ակցիաներ և պահանջում Ծայրագույն պատրիարք և ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի հրաժարականը: Հունիսի 6-ին խումբն հանդես եկավ հայտարարությամբ՝ մեղադրելով կաթողիկոս Գարեգին Բ-ին ՀԱԵ-ն թուլացնելու և «երկիրն աղանդավորներին, միասեռականներին, արթեիստներին, պատեհապաշտներին հանձնելու» մեջ: Հուլիսի 14-ին շարժման ներկայացուցիչները Վայոց Ձորի Գնդեվանք

վանական համալիրում շրջափակել են Կաթողիկոսի մեքենան և թույլ չեն տվել, որ նա հեռանա: Ցուցարարները ոստիկանների ներկայությամբ վիրավորանքներ են հնչեցրել նրա հասցեին: Վաղարշապատի մայր տաճարից ՀԱԵ հոգևորականը նաև նշում էր, որ քաջքշելուց և հրմշտելուց զատ նաև սահմանափակվել է Կաթողիկոսի ազատ տեղաշարժը և նրան սպառնացել են փակել վանքում: Հուլիս 15-ին ֆեյսբուքյան ուղիղ եթերում վարչապետ Փաշինյանն այս զարգացումները բնութագրեց որպես ներեկեղեցական խնդիր, որոնց կառավարությունը չպետք է միջամտի և հորդորեց հոգևոր դասի ներկայացուցիչներին քննարկել և լուծում տալ ներքին տարաձայնություններին: Նա նաև շեշտեց կառավարության դերն օրենքների ապահովման մասով՝ նշելով, որ գոհ չի ոստիկանների գործողություններից, որոնք երևում են միջադեպի տեսանյութերում: Վարչապետը նշեց, որ հանձնարարել է ոստիկանությանը մանրակրկիտ ուսումնասիրել միջադեպը և գնահատել ցուցարարների գործողությունները: Ըստ ոստիկանության լրատվական ծառայության, ոստիկանապետի հանձնարարականով իրականացվելու էր միջադեպի քննություն և գնահատական էր տրվելու ոստիկանների գործողություններին: Այնուամենայնիվ, ինչպես նշում է ՀԱԵ-ի ներկայացուցիչն Էջմիածնից, ոստիկանությունը գործը կարճել է Կաթողիկոսի կյանքին սպառնալիք չլինելու հիմքով:

Հուլիսի 6-ին ակտիվիստների նույն խումբն Էջմիածնում ներխուժել էր ՀԱԵ դիվանատուն, որտեղ գտնվում են Կաթողիկոսի նստավայրն ու գրասենյակային տարածքները: Ըստ ՀԱԵ քահանաներից մեկի, երբ Եկեղեցին դիմել է ոստիկանությանը, սկզբնապես տրվել է պատասխան, որ եկեղեցիներն ու վանքերը հասարակական վայրեր են և իրենք չեն կարող ցուցարարներին հանել այդ վայրերից: Երեք օրից սակայն ոստիկանությունը ցուցարարներին դուրս հանեց այդ տարածքից: Ատիվիստները շարունակում էին պարբերական երթերը Երևանի կենտրոնում և սպառնում էին հետևել Կաթողիկոսի տեղաշարժին:

Մայիսի 8-ին Ազգային ժողովը վարչապետի պաշտոնում ընտրեց նախկին վարչապետ Սերժ Սարգսյանի ապրիլի 23-ի հրաժարականին հանգեցրած ցույցերի առաջնորդ Նիկոլ Փաշինյանին: Փաշինյանը մի շարք առիթներով վերահաստատել է, որ եկեղեցին և պետությունն անջատ են և կառավարությունը չի միջամտի եկեղեցու գործերին: Նոր կառավարությունն անորոշ ժամկետով դադարեցրել է նախկին կառավարության կողմից նախաձեռնած Խղճի և կրոնական կազմակերպությունների մասին օրենսդրական փաթեթի ընդունման գործընթացը: Ըստ կրոնական ազատության հարցերով փորձագետների և կրոնական համայնքի բազմաթիվ ներկայացուցիչների՝ 2017թ. նոյեմբերին հրապարակված օրենսդրական փաթեթի նախագծի վերջին տարբերակով նախատեսվում էր վերահսկել կրոնական կազմակերպություններին, այդ թվում՝ արգելել կրոնական արտահայտման ազատությունը որոշակի հանգամանքներում և արգելել կրոնական կազմակերպությունների օտարերկրյա ֆինանսավորումը: Նախագիծը նաև պարունակում էր դրույթ պարտադիր հրապարակային հաշվետվությունների վերաբերյալ և հնարավորություն կասեցնել կազմակերպության գործունեությունը հաշվետվություն չներկայացնելու դեպքում: Բողոքական ավետարանական եկեղեցիների

ներկայացուցիչները նշում էին, որ նման դրույթները կառավարությունը կարող է ընտրովի կիրառել՝ թիրախավորելով «անցանկալի» փոքրամասնական խմբերին:

Բահայական համայնքի ներկայացուցիչները նշում էին, որ 2017թ. դեկտեմբերից մինչև հուլիս իշխանությունների կողմից իրենց համայնքի ականավոր դեմքերից մեկի՝ Էդուարդ Մանասյանի կալանքը, ուներ կրոնական շարժառիթ: Հուլիսին նա առաջին աստիճանի դատարանի որոշմամբ գրավի դիմաց ազատ արձակվեց: Տարեվերջի դրությամբ դատավարությունը դեռ ընթացքի մեջ էր: Տեղական հասարակական կազմակերպությունները և իրավապաշտպանները նշում էին, որ մտահոգություններ ունեն այս գործի հետ կապված, այդ թվում այն փաստի առնչությամբ, որ նախքան Մանասյանին ձերբակալելը հսկողություն է եղել բահայական համայնքի անդամների հանդեպ:

Սեպտեմբերի սկզբներին լրատվամիջոցներում հաղորդումներ եղան այն մասին, որ փոքրամասնական կրոնական «աղանդները» ներթափանցել են Վայոց Ձոր մարզի Ելփին համայնքի դպրոց, ինչի հետևանքով մի շարք ծնողներ հրաժարվում են իրենց երեխաներին դպրոց ուղարկել: Ըստ Կրոնի և իրավունքի կենտրոնի՝ երբ դպրոցի չորս ուսուցիչներ ուստիկանությանը հաղորդում են ներկայացրել, որ դպրոցի տնօրենը ներքաշված է կոռուպցիայի մեջ, վերջինս սկսել է ուսուցիչներին արատավորելու արշավ, որի արդյունքում տեղի ակտիվիստներն ու ավագանու անդամներն ուսուցիչներին մեղադրել են կրոնական «աղանդի» անդամ լինելու մեջ: Ակտիվիստները պահանջել են աշխատանքից ազատել ուսուցիչներին՝ նշելով, որ նրան կարող են դպրոցում «քարոզչություն» իրականացնել: Երբ պարզ դարձավ, որ 4 ուսուցիչներից 3-ը ՀԱԵ հետևորդ են, իսկ չորրորդը՝ բողոքական ավետարանական եկեղեցու անդամ, վերջինս դարձավ ցուցարարների միակ թիրախը, թեպետ ակտիվիստներն ընդունում էին, որ չունեն որևէ ապացույց առ այն, որ նա դպրոցում իրականացնում է քարոզչություն կամ դավանափոխություն: Բոյկոտի հետևանքով դպրոցը կրճատեց ուսուցչի դասաժամեր թողելով միայն մեկ դասարան, ինչի արդյունքում կրճատվեց նրա աշխատավարձը: Ըստ Կրոնի և իրավունքի կենտրոնի, որը ներկայացնում էր ուսուցչի շահերը, վերջինիս նկատմամբ հաշվեհարդար և խտրականություն էր դրսևորվել նրա դավանանքի պատճառով: Մարզպետարանը հայտարարեց, որ միջոցներ են ձեռնարկվել խնդիրը կարգավորելու համար և որ դպրոցի ուսուցիչներին ու աշակերտներին ծնողներին պարզաբանվել է, որ ըստ Սահմանադրության յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունք: Մարզպետարանը դպրոցի տնօրենին կարգապահական տույժի ենթարկեց: Ըստ Կրոնի և իրավունքի կենտրոնի՝ բողոքական ավետարանական եկեղեցու հետևորդ ուսուցչի աշխատանքային պայմանները տարեվերջի դրությամբ դեռ չէին փոխվել:

Երկրի մասնավոր և հանրային դպրոցների գերակշիռ մասում շարունակվել է Հայոց եկեղեցու պատմություն առարկայի դասավանդումը 5-11-րդ դասարաններում: Ըստ պաշտոնական տեղեկատվության Հայոց եկեղեցու պատմություն առարկան



դասավանդվել է հանրակրթական բոլոր դպրոցներում առանց բացառության, սակայն տարվա ընթացքում եղան առանձին հաղորդումներ, որ առնվազն մեկ հանրակրթական դպրոցում և եզդիաբնակ գյուղերի 2 դպրոցներում առարկան չի դասավանդվել: Նոյեմբերի 14-ին խորհրդարանական ճեպագրույցների ժամանակ կրթության նոր նախարարը փաստեց, որ Հայոց եկեղեցու պատմությունն առարկայի հետ կապված լուրջ վերանայումների կարիք կա: Ըստ փոխնախարարի բարեփոխման համար կպահանջվի շուրջ 3 տարի և դա կներառի Հայոց եկեղեցու պատմությունն առարկայի վերանայում և կրոնների պատմության շեշտադրում՝ ապահովելով համապատասխանությունը Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Հանրային դպրոցներում կրոնների և հավատքների ուսուցման վերաբերյալ Տոլեդոյի ուղղորդող սկզբունքներին: Իսկ մինչ այդ 2019-20 ուսումնական տարվանից սկսած ազգային փոքրամասնությունները հնարավորություն կունենան Հայոց եկեղեցու պատմության փոխարեն ընտրել այլ առարկա:

Եզդիական համայնքի ներկայացուցիչները կրկին դժգոհություն են հայտնել Հայոց եկեղեցու պատմությունն առարկայի պարտադիր լինելու վերաբերյալ, որը նրանք որակում են որպես «կրոնական ինդոկտրինացիա»: Թեպետ բոլոր եզդիական դպրոցները կարողացել են առարկան հանել իրենց առարկայացանկից, սակայն խառը դպրոցներ հաճախող եզդի երեխաները պարտադրված էին սովորել այս առարկան՝ չնայած ծնողների առարկություններին:

ՀԱԵ-ի հետ առնչություն չունեցող որոշ կրոնական խմբեր փաստում էին, որ որևէ առարկություն չունեն հանրակրթական դպրոցներում Հայոց եկեղեցու պատմության դասավանդման վերաբերյալ, չնայած որոշներն առարկություններ ունեին աղոթքների ու խաչակնքվելու վերաբերյալ, որոնք ըստ հաղորդումների տեղի էին ունենում այս առարկայի դասաժամերին և նշում էին, որ ցանկանում են տեսնել ՀԱԵ-ից զատ այլ կրոնական խմբերի ավելի ճշգրիտ նկարագրեր: Կրթության նախարարությունը նշել է, որ տարվա ընթացքում չեն ստացվել բողոքներ Հայոց եկեղեցու պատմության վերաբերյալ և որ իրենք ուսուցիչներին հրահանգել են պահպանել առարկայի աշխարհիկ բնույթը և գերծ մնալ կրոնական քարոզչությունից: ՀԿ-ներ, այլ կրոնական կազմակերպություններ, աթեիստներ, ՀԱԵ-ի ոչ հավատացյալ անդամներ հրապարակային մտահոգություններ են հայտնել Հայոց եկեղեցու պատմության առարկայում իրենց որակմամբ կրոնական ինդոկտրինացիայի տարրերի առկայության վերաբերյալ, ինչպես նաև ՀԱԵ-ի հետևորդ լինելն ազգային ինքնությանը նույնացնող նյութերի վերաբերյալ: Եղել են հաղորդումներ, որ որոշ դպրոցներում առարկան դասավանդվել է ՀԱԵ-ի հոգևորականների կողմից և դասերի շրջանակում պահանջվել են այցելություններ ՀԱԵ եկեղեցիներ՝ առանց այլ հավատքներ քննարկելու կամ աշակերտների կողմից ՀԱԵ-ի կառույց չհանդիսացող կրոնական վայրեր այցելելու հնարավորության: Ըստ կառավարության՝ 2018-19 ուսումնական տարում

ՀԱԵ-ի հոգևոր դասի 6 ներկայացուցիչներ դասավանդել են Հայոց եկեղեցու պատմություն 4 հանրակրթական և 2 մասնավոր դպրոցներում:

Մարդու իրավունքների ակտիվիստները մտահոգություն են հայտնել, որ կրոնական տարրերը հանրակրթական գործընթացի կայուն մասն են կազմել և առկա են անգամ Հայոց եկեղեցու պատմություն առարկայից դուրս:

2012թ. Կրթության նախարարության կողմից մեկնարկած պիլոտային ծրագրի հիման վրա դպրոցների տնօրինությունները 2-ից 4-րդ դասարաններում կարող են ներառել հավելյալ առարկա, որը կոչվում է Հայոց եկեղեցու պատմություն/քրիստոնեական դաստիարակություն: Նոր ուսումնական տարվա ընթացքում այս տարբերակով առաջնորդվել է 74 դպրոց:

Ըստ կառավարության՝ ՀԱԵ-ից գատ որևէ այլ կրոնական խումբ գործառնաքայցիկ այցելելու հայտեր չի ներկայացրել: Զինված ուժերի հոգևոր առաջնորդության ծրագիրը, որ պաշտպանության նախարարության և ՀԱԵ-ի համատեղ նախաձեռնությունն է, շարունակում է այդ ծրագրում ներգրավել միայն ՀԱԵ-ի հոգևորականներին:

Ըստ կառավարության՝ տարվա ընթացքում ՀԱԵ-ն շաբաթը մինչև 3 անգամ այցելություններ է կատարել դեպի 12 քրեակատարողական հիմնարկներից յուրաքանչյուրը՝ հոգևոր զրույցներ ունենալու բանտարկյալների հետ և իրականացնելու պատարագներ, կնունքներ և այլ կրոնական արարողություններ: Տարվա առաջին 9 ամիսների ընթացքում Ռուսական ուղղափառ եկեղեցու, Եհովայի վկաների, Հայ ավետարանական եկեղեցու ներկայացուցիչներն այցելել են քրեակատարողական հիմնարկներ համապատասխանաբար 4, 16 և 7 անգամ:

Եհովայի վկաները նշում էին, որ շարունակում են դժվարությունների բախվել պաշտամունքային վայրեր կառուցելու հարցում, քանզի ամբողջ երկրում այդ հարցին միջամտում են տեղական պաշտոնյաները: Տարեվերջի դրությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ընթացքի մեջ էին մնում երեք գործ՝ կապված Եհովայի վկաների սեփականության իրավունքով պատկանող տարածքներում պաշտամունքային վայր կառուցելու վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի արգելքի հետ:

Յոթերորդ օրվա աղվենտիստներն իրենց դժգոհությունն էին հայտնում, որ մի շարք դպրոցներ աշխատում են նաև շաբաթ օրերին և որ դպրոցական կամ համապետական քննություններն անցկացվում են շաբաթ օրերին, որն իրենց համայնքի համար պաշտամունքային օր է: Խմբի ներկայացուցիչները փաստում էին, որ իրենց անդամներն անհատական մակարդակում կարողացել են լուծում գտնել: Նոր կառավարությունը դադարեցել է ՀԱԵ եկեղեցական տոները ոչ աշխատանքային հայտարարելու և դրանց փոխարեն նախորդ կամ հաջորդ շաբաթ օրն աշխատանքային հայտարարելու պրակտիկան:

Մայիսի դրությամբ Եհովայի վկաների 123 անդամներ ներգրավված էին այլընտրանքային քաղաքացիական ծառայության ծրագրում:

### **Մաս III. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐԳԱՆՔԸ ԿՐՈՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ**

Ըստ լրատվական վերլուծաբանների ապրիլյան «թավշյա հեղափոխությունից» հետո հեռացված իշխանությունների հետ կապ ունեցող կամ համակիր մասնավոր անձիք օգտագործել են կրոնական խնդիրները նոր կառավարությանը քննադատելու նպատակով: Ըստ լրատվական և կրոնական ազատության հարցերով փորձագետների այդ անհատներն օգտագործել են հիբրիդային կայքեր, հակասական բլոգերներ, տրոլինգ, կեղծ ֆեյսբուքյան խմբեր և կեղծ պատմություններ՝ տարածելու այն գաղափարը, որ հեղափոխությունը իրականացրել են փոքրամասնական կրոնական խմբերը կամ «աղանդները» (սովորաբար ՀԱԵ-ից զատ ցանկացած խումբ այսպես է որակվում): Այս անհատները պնդում էին, որ փոքրամասնական կրոնական խմբերը շարունակում են ներգործել նոր կառավարության վրա:

Սեպտեմբերին «Կյանքի խոսք» եկեղեցին Ազգային անվտանգության ծառայությանը դիմեց պահանջելով քրեական գործ հարուցել կեղծ ֆեյսբուքյան էջի հետ կապված, որը ներկայանում էր թե իբր կապված է և «Կյանքի խոսք» եկեղեցու, և վարչապետի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հետ: Ըստ «Կյանքի խոսք» եկեղեցու ներկայացուցիչների՝ ի թիվս այլ հրապարակումների այդ ֆեյսբուքյան էջը տեղադրել էր «Կյանքի խոսք» եկեղեցու ավագ հովվի լուսանկարը՝ կցելով հակահայկական և հակա-ՀԱԵ հայտարարություններով հողված, որը Եկեղեցու դեմ հանրային մեծ աղմուկի պատճառ դարձավ: «Կյանքի խոսք» եկեղեցու ներկայացուցիչները կարծում են, որ այդ ֆեյսբուքյան էջի ետևում կանգնած էր կազմակերպված խումբ, ամենայն հավանականությամբ նոր կառավարության քաղաքական հակառակորդ: Հոկտեմբերի 1-ին Ազգային անվտանգության ծառայությունը քրեական գործ հարուցեց կրոնական ատելություն հրահրելու մեղադրանքով. տարեվերջի դրությամբ քննությունը շարունակվում էր, իսկ ֆեյսբուքյան էջը շարունակում էր գործել:

Սոցիալական հարթակներում քննադատեցին կառավարության մի քանի պաշտոնյաների՝ փոքրամասնական կրոնական խմբերի հետ կապ ունենալու համար: Մի առիթով նոր կառավարությունում պաշտոն զբաղեցրած մի պաշտոնյա, ով «Կյանքի խոսք» եկեղեցու անդամ էր, նշեց, որ հրաժարական է տվել հանրային ճնշման արդյունքում:

Ըստ Եհովայի վկաների իրենց անդամների նկատմամբ կրոնական համոզմունքները հրապարակավ դրսևորելու ընթացքում եղել են բառացի վիրավորանք հասցնելու դեպքեր: Որոշ դեպքերում անհայտ անձինք շուտ են տվել և վնասել խմբին պատկանող գրականության սայլակները: Ըստ Եհովայի վկաների ոստիկաններն օպերատիվ արձագանքել են, ինչի շնորհիվ նվազել է միջադեպերի թիվը:

Շարունակվում էր եզդիական Քուրա Մեր Դիվան տաճարի շինարարությունը, որը լրատվամիջոցներն համարում են աշխարհի ամենամեծ եզդիական տաճարը: Ակնալիճ ոչ մեծ համայնքում կառուցվող այս տաճարն ըստ եզդիական համայնքի կդառնա երկրում բնակվող եզդիների «հոգևոր կենտրոնը»:

#### **ՄԱՍ IV. ԱՄՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Դեսպանը և դեսպանության մյուս ներկայացուցիչները շարունակել են պետական պաշտոնյաների հետ հանդիպումների ընթացքում խթանել կրոնական հանդուրժողականությունն ու միջդավանական երկխոսությունը: Դեսպանության պաշտոնյաները և պետքարտուղարության միջազգային կրոնական ազատությունների գրասենյակից այցելած պաշտոնյան ապրիլին հանդիպում են ունեցել Արդարադատության նախարարության ներկայացուցիչների հետ՝ քննարկելու կրոնական փոքրամասնությունների և իրավապաշտպան խմբերի կողմից առաջ քաշած մտահոգությունները կրոնական ազատության վերաբերյալ առաջարկվող օրենսդրական փաթեթի սահմանափակող դրույթների շուրջ: Դեսպանատան պաշտոնյաները հանդիպել են Կրթության նախարարության ներկայացուցիչների հետ՝ քննարկելու Հայոց եկեղեցու պատմություն առարկայի հետ կապված մտահոգությունները և դրանք փարատելու ուղղությամբ կառավարության կողմից ձեռնարկվող քայլերը:

Դեսպանը պարբերաբար հանդիպել է կառավարության, կուսակցությունների, սոցիալական խմբերի և կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչներին՝ քննարկելու կրոնական փոքրամասնությունների հանդեպ դրսևորվող խտրականության հարցերը, նպաստելու կառավարության ու կրոնական փոքրամասնությունների միջև երկխոսությանը և դիտարկելու հիմնահարցերի համատեղ լուծումները: Հուլիսին դեսպանն ընդունելություն կազմակերպեց ՀԱԵ-ի, կրոնական և էթնիկ փոքրամասնությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար՝ նպաստելու միջկրոնական երկխոսությանը, փոխադարձ հարգանքին և համագործակցությանը և ներկայացնելու Պետքարտուղարության կրոնական ազատությունների մասին 2017թ. զեկույցը: Հանդիպման ընթացքում դեսպանը շեշտեց պաշտամունքի ազատության համընդհանուր իրավունքը, որն ունի յուրաքանչյուր ոք, ինչպես նաև որևէ դավանանքի հարելու կամ չհարելու ազատությունը:

Դեսպանն հանդիպել է ՀԱԵ-ի առաջնորդների հետ՝ նրանց մասնակից դարձնելու կրոնական փոքրամասնությունների կողմից իրենց հավատքին առանց սահմանափակումների դավանելու իրավունքի իրացմանն աջակցելու գործին: Դեսպանության պաշտոնյաները մասնակցել են Եվրասիա համագործակցության հիմնադրամի կրոնական հանդուրժողականության ծրագրերի շրջանակում պարբերաբար կազմակերպվող խտրականություն չղնելու ու կրոնական

հանդուրժողականության հարցերով համաժողովներին ու քննարկումներին: Նրանք այցելել են Արևելքի ասորական կաթողիկոսության սուրբ առաքելական գյուղ մասնակցելու երկրում ասորական համայնքի հիմնադրման 190-ամյակի տոնակատարությանը: Դեսպանատան պաշտոնյաները նաև այցելել են եզդիական Ֆերիկ համայնքը և պարբերաբար հանդիպել են ՀԱԵ-ի ու կրոնական և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ, այդ թվում ավետարանական քրիստոնյաների և այլ բողոքականների, Եհովայի վկաների, Հիսուս Քրիստոսի եկեղեցու հետևորդների, եզդիների, հրեական համայնքի, առաքելական ասորիների, հիսունականների և բահայիների հետ: Այս հանդիպումներում դեսպանատան պաշտոնյաները և կրոնական խմբերի ներկայացուցիչները քննարկել են կրոնի ազատության մասով երկրում տիրող իրավիճակը, այդ թվում փոքրամասնական կրոնական խմբերին մտահոգող հարցերը: Նրանք նաև հանդիպել են քաղաքացիական հասարակության խմբերի հետ՝ քննարկելու նրանց մտահոգությունները կապված հանրակրթական դպրոցներում Հայոց եկեղեցու պատմության դասավանդման հետ: Դեսպանատան պաշտոնյաները հետևել են բահայական համայնքի դիտարկմամբ կրոնական հիմքով քրեական հետապնդման ենթարկվող բահայական համայնքի ներկայացուցչի դատավարության ընթացքին:

Դեսպանության պաշտոնյաները հանդիպել են ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի և Վենետիկի հանձնաժողովի համատեղ պատվիրակությանը՝ քննարկելու կրոնական խմբերի կողմից կրոնական ազատության վերաբերյալ օրենսդրական փաթեթի նախագծի վերաբերյալ հնչեցրած մտահոգությունները:

Դեսպանությունն օգտագործել է սոցիալական հարթակները, այդ թվում՝ թվիթերյան և ֆեյսբուքյան հարթակները՝ հղելու ուղերձներ ի նպաստ կրոնական բազմազանության և հանդուրժողականության, ինչպես նաև ուշադրություն հրավիրելու հունվարի 11-ին նշվող Կրոնական ազատությունների միջազգային օրվան և պետքարտուղարության Կրոնական ազատությունների մասին զեկույցին: